



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Դեկտեմբերի 15, 2021

Հայաստանում երկրորդ ՍՄԱԲԹ կենտրոնը կառուցելու

համար ՔՈԱՖ-ը հավաքագրել է ավելի քան 8.4 մլն. ԱՄՆ դոլար

Նյու Յորք — «Հայրենիքի կանչով» խորագրով ամենամյա դրամահավաքի ընթացքում, որն արդեն երկրորդ անգամ անցնում էր առցանց, հավաքագրվեց ՔՈԱՖ-ի պատմության մեջ ամենախոշոր գումարը՝ ավելի քան 8.4 մլն. ԱՄՆ դոլար: Հայթայթված գումարը ներդրվելու է Արմավիրի մարզում ՍՄԱԲԹ կենտրոն կառուցելու մեջ, որը Լոռու մարզի ՍՄԱԲԹ կենտրոնից հետո կլինի երկրորդը Հայաստանում:

Արմավիրը, որտեղ կառուցվելու է երկրորդ [ՍՄԱԲԹ կենտրոնը](#), ՔՈԱՖ-ի բնօրրան է, որտեղից հիմնադրամը մեկնարկել է գյուղական համայնքները զարգացնելու իր ծրագրերը դեռ 18 տարի առաջ: ՍՄԱԲԹ կենտրոնները նորարարական, ոչ ֆորմալ կրթություն ապահովող հանգույցներ են, որ արագացնում են անտեսված գյուղական համայնքների զարգացման տեմպը: Լոռու ՍՄԱԲԹ կենտրոնն արդեն իսկ մարզի 27 համայնքների ավելի քան 2,500 երեխաների ու նրանց ընտանիքների ապահովել է կրթությամբ, ինչպես նաև առողջապահական, հոգեբանական ու սոցիալական ծառայություններով: Փաստորեն, Լոռու մարզում կիրառվող գյուղական համայնքների զարգացման ՍՄԱԲԹ մոդելը կրկնօրինակվելու է Արմավիրում՝ ստեղծելով որակյալ կրթության, մասնագիտական կողմնորոշման, տնտեսական ու սոցիալական կայունության հնարավորություններ հազարավոր երեխաների ու նրանց ընտանիքների համար՝ նպաստելով վերջիններիս համապարփակ զարգացմանը:

Այս տարվա դրամահավաքին մեր նվիրատուների անսահման ու աննկարագրելի առատաձեռնության ակնատեսը եղանք. շուրջ 5 մլն. ԱՄՆ դոլար նվիրաբերվել է անանուն, մեր բազմամյա աջակիցներից, ինչպիսին Վահե Ֆաթալ հիմնադրամն է, ստացել ենք ապշեցնող ծավալների աջակցության խոստում ու պատրաստակամություն: Վահե Ֆաթալ հիմնադրամի ներդրմամբ Արմավիրի ՍՄԱԲԹ կենտրոնում կբացվի թվային դիզայնի ստուդիա: Եվս 1 մլն. ԱՄՆ դոլար էլ նվիրաբերել է ՔՈԱՖ-ի հիմնադիր Կարո Արմենը:

«Հայրենիքի կանչով» դրամահավաքը, փաստորեն, միավորեց մարդկանց, որոնք հավատարիմ են Հայաստանի երիտասարդությանը գորակցելու, նրանց զարգացման, այդուհանդերձ Հայաստանի ապագայի մեջ ներդրում անելու առաքելությանը: Ուշարժան նվիրատվություններից են՝ Արմեն և Ջենեթ Ավանեսյանների ու ընտանիքի



CHILDREN
OF ARMENIA
FUND

կողմից 150, 000 ԱՄՆ դոլար, JHM հիմնադրամի կողմից 150, 000 ԱՄՆ դոլար, Ջեք և Չարիկ Յուրեջյանների կողմից 150, 000 ԱՄՆ դոլար, Փիթեր և Մերելին Սարգսյաններ/Աճեմյան հիմնադրամ՝ 105,000 ԱՄՆ դոլար, Վիկտոր Ծառուկյան և Ջուդիթ Սարյան՝ 100,000 ԱՄՆ դոլար, որից 50,000 ԱՄՆ դոլարը նախատեսված է ՔՈԱՖ-ի՝ Արցախ մուտք գործելու համար, 100,000 ԱՄՆ դոլար անանուն, Յայկ և Յիլդա Մանչիկյան՝ 100,000 ԱՄՆ դոլար, Մայքլ Փանոսյան / ToughBuilt Industries՝ 100,000 ԱՄՆ դոլար: Իրենց ներդրումն ունեցան նաև Tacori-ն և Levon Travel-ը. Tacori-ն սվիրաբերել էր երկու գեղեցիկ զարդ, իսկ Levon Travel-ը՝ 1,000 ԱՄՆ դոլար արժողության ճամփորդության հավաստագիր՝ միջոցառման ընթացքում խաղարկելու համար: Հուզիչ ու ուրախացնող է, որ սվիրատվություններ ենք ստացել նաև ՔՈԱՖ-ի շահառու համայնքների երեխաներից ու ուսանողներից:

Այս տարբա միջոցառումը վարում էին Լուս Անջելեսի FOX 11 հեռուստաալիքի Good Day L.A. հաղորդաշարի վարող Արաքսյա Կարապետյանը, ՔՈԱՖ-ի զարգացման գծով տնօրեն Յայկ Բոյաջյանը, հանրահայտ աճուրդավար Գաբրիել Բուտուն, USArmenia հեռուստաալիքի հաղորդավար Արմինե Ամիրյանը, «Թոնի» մրցանակի դափնեկիր Անդրեա Մարտինը: Ինչպես միշտ, միջոցառումը հազեցած էր նաև երաժշտական ինքնատիպ կատարումներով օպերային երգիչ Գուրգեն Բավեյանի, դաշնամուրային դուետ Աիդա Ավանեսյանի և Սվետլանա Յակոբյանի, տաղանդավոր Ադվան Պապոյանի ու Արթուր Մնացականյանի, ինչպես նաև Գոռ Սուլջյանի ու Carpet Jam-ի կողմից: Ունեինք նաև նշանավոր հյուրեր իրենց տեսաուղերձներով, այդպիսիք էին՝ բազմաթիվ մրցանակների դափնեկիր, դերասան Էդ Յարիսը, ամերիկահայ գրող Քրիս Բոհջայանը, Կալիֆորնիայի նահանգային ասամբլեայի անդամ Ադրին Նազարյանը, հայտնի գրող Փիթեր Բալաքյանը, Նոբելյան մրցանակի դափնեկիր Արտեմ Պատապուտյանը, կատակերգու Լորի Թաթուլյանը, դերասան Գարիկ Պապոյանը, կատակերգու և գրող Վահե Բերբերյանը, Կալիֆորնիայի ապահովագրության կոմիսար Ռիկարդո Լարան:

Եթե բաց եք թողել միջոցառումը, ապա կարող եք դիտել տեսաձայնագրությունը givebutter.com/homeiscalling կայքում կամ [դիտել](https://www.youtube.com/watch?v=...) Good Day L.A հաղորդման շրջանակներում Արաքսյա Կարապետյանի անդրադարձը: Դեռևս կարող եք կատարել սվիրատվություն՝ սատարելով մեր առաքելությանը:



CHILDREN
OF ARMENIA
FUND

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: